

ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՏԻԱՐ ՋՈՆ ՆԱՋԱՐՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 10-ին, կիրակի օրը, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը և թեմական խորհրդի ատենապետ, դատավոր Ջոն Նաջարյանը:

Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, տ. Թորգոմ սրբազանը և ատենապետ Ջ. Նաջարյանը ընդունվեցին Հայոց Հայրապետի կողմից:

Վեհարանում ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ սրտագին զրույց՝ ԱՄՆ-ի հայոց եկեղեցական կարևոր հարցերի շուրջ:

Մայր Աթոռում գտնված օրերին տ. Թորգոմ սրբազանը և պրն. Ջ. Նաջարյանը այցելեցին Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարան, Նոր Վեհարան, թանգարանի վերածված Հին Վեհարան, խմբագրություն, հոգևոր ճեմարան, մայրավանքի գրասենյակներ, վանական սեղանատուն, Մայր Աթոռի տպարան, Սարդարապատ, Երևանի ս. Սարգիս եկեղեցի, Ծիծեռնակաբերդ, ֆիզիկայի ինստիտուտ, Մատենադարան, Բյուրականի հայրապետական ամառանոց, Բյուրականի աստղադիտարան, ուր տեսակցություն ունեցան ակադեմիկոս, մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանի հետ, Պետական թանգարան, ապա Սևան, Հաղարծին, Հայաստանի մայրաքաղաքի տեսարժան վայրեր և ուխտի գնացին ս. Գեղարդ և Խորվիրապ:

Հուլիսի 17-ին, Վարդավառի տոնին, Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի թեմական առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բելգիացի հայտնի հոգևորական գործիչ, կանոնիկոս Ռայմոնդ Գորը, նաև մի խումբ ամերիկահայ ուխտավորներ:

Ս. պատարագին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս» (Մատթ. ԺԷ 2) բնաբանով:

Իր քարոզի մեջ Հայոց Հայրապետը վեր հանեց Թափոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպության դեպքի հոգևոր և բարոյական նշանակությունը և՛ եկեղեցու կյանքում, և՛ քրիստոնյա անհատի կյանքի ու գործունեության մեջ: Այնուհետև Նորին Սրբությունը հայրական ջերմ սիրով ողջունեց ներկայությունը Մայր Աթոռում տ. Թորգոմ արքեպիսկոպոսի, տ. Տիրայր եպիսկոպոսի և ԱՄՆ-ի հայոց թեմական խորհրդի ատենապետ պրն. Ջոն Նաջարյանի:

Հայոց Հայրապետը ջերմ սիրով ողջունեց նաև ներկայությունը Մայր տաճարում կանոնիկոս, հայր Ռայմոնդ Գորի;

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության ջերմ խոսքով հանդես եկավ տ. Թորգոմ սրբազանը՝ շեշտելով ափյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի և վերածնված մայր հայրենիքի կատարած փրկարար ու նախախնամական դերը ազգապահպանման սրբազան առաքելության ճանապարհի վրա:

Ապա Հայոց Հայրապետին ուղղյալ սրտագին շնորհակալության խոսք ասաց կանոնիկոս Ռայմոնդ Գորը՝ հայ եկեղեցու դարավոր կենտրոն ս. Էջմիածին և աստվածաշնչական Հայոց աշխարհ այցելելու ուրախ առիթով:

Ժամը 16.30-ին Վեհարանում, ի պատիվ տ. Թորգոմ սրբազանի, Ջ. Նաջարյանի և կանոնիկոս Ռ. Գորի, տրվեց հրաժեշտի ընդունելություն, որին ներկա եղան տ. Կոմիտաս, տ. Տիրայր և տ. Արսեն սրբազանները, Մայր Աթոռի միաբանության անդամները, Ա. Հատիտյանը, Գ. Քեհյայանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Մուշեղ Սերոբյանը, ամերիկահայ ուխտավորներ տեր և տիկին Էդվարդ Պողոսյանները:

Ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ընդունելության ժամանակ ողջերթի և շնորհակալության ջերմ խոսքեր արտասանեցին Վեհափառ Հայրապետը, տ. Թորգոմ սրբազանը, կանոնիկոս Ռայմոնդ Գորը, Ջոն Նաջարյանը և «Արմենյան ռիվորթ» թերթի խմբագիր Էդվարդ Պողոսյանը:

Հուլիսի 19-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, Թորգոմ սրբազանը և Ջոն Նաջարյանը հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին և մեկնեցին Մայր Աթոռից լավագույն տպավորություններով: